ԱԽԹԱԼԱՅԻ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՄՈՒՏՔԻ ԱՇՏԱՐԱԿԸ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ



ԱԽԹԱԼԱՅԻ

ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ (XIII ԴԱՐ)

ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ

ԳԻՏԱ- ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Սբ. Աստվածածին եկեղեցու որմնանկարների կոնսերվացիան և ինտերիերի ամբողջական տեսքը ապահովվելու համար անհրաժեշտ աշխատանքներ:

- Սվաղի և ներկի շերտերի նախնական ուսումնասիրում (քիմիական և սպեկտրալ անալիզներ):
- Որմնանկարի տեխնիկական վիճակի ուսումնասիրում (կրային սպիտակույթի և եմչուգի, հիմքի ու ներկի շերտերի փոշիացման պատճառների պարզաբանում):
- Որմնանկարների գիտա-վերականգնման մեթոդիկայի կազմում:
- Որմնանկարների կեղտոտվածության (կրային սպիտակույթի և եմչուգի, թռչնի ծերտի և այլնի) մաքրում:
- Որմնանկարների հիմքի լևկասի ամրացում և լրացում:
- Որմնանկարների ներկի փոշիացած և թեփուկավորված շերտերի ամրացում:
- Եկեղեցու ինտերիերը ամբողջական տեսքի բերելու նպատակով որմնանկարների կորսված հատվածների սվաղապատում տոնավորում և տեղային վերականգնում:
- Որմնանկարների ներկի շերտի ախտահանում:
- Որմնանկարների հիմքի մշակում (կրային ապակեշերտի հղկում)

Եկեղեցու նավերի որմնանկարների իկոնոգրաֆիկ ուսումնասիրում և մասշտաբային պատճենահանումներ:

ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՏԵՍՔԸ ՆԱԽՔԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ



ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՑ



ՀՈՒՇԱՐՁԱՆ

ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԱՐՈՒՄ

Ախթալայի վանքային համալիրը ամբողջական և բարեկարգ տեսքի բերելու համար կատարվելիք աշխատանքներ:

- Ախթալա գյուղից մինչև Ախթալայի ամրոցը տանող ճանապարհի (500 մ) լայանցում ասֆալտապատում, կամրջի (6 մ) թռիչք վերանորոգում:
  - Ամրոցի տարածքի կանաչապատում:
  - Ամրոցի տարածքի անցուղիների և եկեղեցու շրջապատի սալիկապատում:
  - Իջևանատուն-հյուրանոցի (50տեղանոց) կառուցում:
  - Ամրոցի պարիսպներին կից արհեստանոցների հարդարում:

Հուշարձան աղբյուրի կառուցում:

ԱՂԲՅՈՒՐ ՀՈՒՇԱՐՁԱՆ

ԻՋԵՎԱՆԱՏՈՒՆ-ՀՅՈՒՐԱՆՈՑ





ԱԽԹԱՅԻ

[illegible] [illegible] ԵՎ ԶԻՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ





Սբ.Աստվածածին եկեղեցու ինտերիերի, որպես հայ մոնումենտալ արվեստի թանգարանի ձևավորում:

- Եկեղեցու փայտյա դռների տեղադրում:
- Պատուհանների տեղադրում:
- Երկաթյա դարբնակուռ մոմակալների պատրաստում և տեղադրում:
- Եկեղեցու մեծ ջահի պատրաստում և տեղադրում:
- Ամրոցի միջնաբերդի աշտարակում և սեղանատանը զինագործության թանգարանի ինտերիերի ձևավորում:
- Ամրոցի մուտքի երկաթակուռ դռան տեղադրում:







Պատուհան



Դուռ

ԶԻՆԱԳՈՐԾԱԿԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ՆՄՈՒՇՆԵՐ

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կատարելով Ախթալայի վանքային համալիրի գիտա-վերականգնման աշխատանքները և այն վերածելով հայ մոնումենտալ արվեստի ու գինագործության արվեստի թանգարանների, ստեղծվում է հանրապետությունում զբոսաշրջիկության զարգացմանը նպաստող իրողություն:

Համալիրի այցելուները կծանոթանան Լոռվա տարածաշրջանի պատմական հուշարձաններին ինչպիսիք են Հաղպատի, Սանահինի, Օձունի, Քոբայրի և այլ ճարտարապետական արվեստի կոթողները:

ՄԱՐԶԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ





ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ

ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ախթալայի ամրոցի ամբողջական վերականգնումը, արհեստանոցների շահագործումը նպաստում է հայ միջնադարյան արհեստների ճանաչողության տարածմանը, ստեղծում լրացուցիչ աշխատատեղեր, և ապահովվում իրավիճակ, որը նպաստում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջանի տնտեսական աշխուժացմանը ինչն էլ իր հերթին համահունչ է պետության անվտանգության և զարգացման ծրագրերին:



ԼԱԼՎԱՐԻ

ԱՐԳԵԼԱՆՈՑԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԵՐԹՈՒՂԻ







ԱԽԹԱԼԱՅԻ (X-XIII դդ) ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱ-ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐՊԵՍ ՀԱՅ ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՁԻՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

«ՍԻՍ-ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱ» ՍՊԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայաստանում իշխող՝ Բագրատունիներ Աշոտ III-ի և նրան հաջորդած Սմբատ II-ի թագավորության տարիներին (980-990), տեղի էր ունենում պետության քաղաքական մասնատում: Մի կողմից միջֆեոդալական ըհդհարումները, մյուս կողմից դրսի ուժերի (Բյուզանդիա, Թուրք-սելջուկներ) ասպատակումները հանգեցրին Հայաստանի միացյալ թագավորության մասնատմանը:

Մասնավորապես Սմբատ II-ի դեմ ըմբոստացած նրա եղբայր Գուրգենն անջատեց Գուգարքը Անիի թագավորությունից, իսկ նրա որդի Դավիթը (Անհողին մականունով) հիմք դրեց Հայկական նոր՝ ԼՈՌՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ, ընդարձակելով նրա սահմանները մինչև Գանձակի էմիրություն:

Այս պատմական իրադարձություններով հիմք դրվեց ԼՈՌԻԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՃՅՈՒՂԻՆ:

- Ս. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ. 1975թ.

Սելջուկյան էմիրությունների դեմ Հայաստանի ազատագրման համար մղած պայքարում խոշոր դեր խաղացին Զաքարյան տոհմի ներկայացուցիչները:

Զաքարյանները XI-դարից հաստատվել են Գուգարքում և ազգակցական շառավիղն են հանդիսանում ԼՈՌՎԱ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ:

- ՎԱՐԴԱՆ ԲԱՐՁՐԱԲԵՐԴՑԻ (ԱՐԵՎԵԼՑԻ). ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ 1861թ.

Քաղաքական ասպարեզ մտնելով XI դարի վերջին և աստիճանաբար հասնելով բարձր ու ազդեցիկ դիրքի՝ նախ Կյուրիկյան (Լոռվա), ապա վրաց Բագրատունիների արքունիքներում՝ Զաքարյանները XII դ. վերջին կազմակերպեցին ու գլխավորեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարը սելջուկյան տիրապետության դեմ:

Սարգիս Զաքարյանը Վրաց թագավոր Դավիթ Շինարարի արքունիքում դառնում է վրաց և հայոց միացյալ զորքերի ամիրսպասալար (Գերագույն հրամանատար), ազատագրում է Անին և նշանակվում է Անիի կառավարիչ:

Հայաստանում և Վրաստանում ունեցած իր մեծ ազդեցության համար Սարգիս Զաքարյանին տրվում է «Մեծ» և «Երկայնաբազուկ» մականունները (վրաց. աղբյուրներում «Մխարգրձելի» ինչը թարգմանաբար նույն երկայնաբազուկն է):

Հետագայում Զաքարյանների ողջ տոհմը կրում էր «Երկայնաբազուկներ» մականունը:

Սարգիս Զաքարյանի մահից հետո Թամար թագուհու գահակալության ժամանակ (1184-1213) «ամիրսպասալարի» պաշտոնը տրվում է նրա ավագ որդուն Զաքարեին, իսկ կրտսեր որդուն՝ Իվանեին

տրվում է վրաց արքունիքի «Աթաբեկ» (խնամակալ), հետագայում և «թագավորահայր» տիտղոսները (Թամար թագուհու մահից հետո Գիորգի Դ. Լաշա թագաժառանգի դաստիարակն էր):

XII դարի վերջերին և XIII-ի սկզբներին, շուրջ 30 տարի պատերազմելով, հայ-վրացական բանակը Զաքարե և Իվանե Զաքարյանների գլխավորությամբ ջախջախեց Գանձակի Փահլևանյան էմիրությունը և ազատագրեց Արցախի նահանգը, Սևանա լճի շրջակայքը և ամբողջ Սյունիքը: Ազատագրվեցին նաև Աղվանքից շատ շրջաններ: 1198-1199 թվականներին ազատագրվեց ամբողջ Շիրակը, Արագածոտն գավառը, Բջնին, Դվին քաղաքը, ամբողջ Արարատյան դաշտը և Այրարատ նահանգի մեծագույն մասը:

Ազատագրված բոլոր հողերի կառավարումը Թամար թագուհին հանձնեց Զաքարյաններին, որոնք դարձան Հայաստանի ինքնիշխան տիրակալներ: (ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ)



Պետական իշխանության ու կառավարման բարձրագույն մարմինները միաձուլված էին և դրանց ֆունկցիաներն իրականացնում էին Զաքարյան իշխանները՝ եղբայրներ Զաքարեն և Իվանեն (այնուհետև նրանց ժառանգները):

Զաքարյանների իշխանությունը կազմված էր վարչա-տերիտորյալ երեք խոշոր միավորներից. երկրի արևմտյան մասը՝(Շիրակ, Լոռի, Վանանդ) Զաքարեի տերությունն էր, արևելյան մասը՝ Սևանա լճի ավազան, Սյունիք, Զորագետի հովիտներ, Իվանեի, իսկ հյուսիս-արևելյան մասը. Արցախ, Գարդման, Շամխոր, նրանց հորեղբոր որդիների՝ Վահրամյանների:

Հաստատելով իրենց իշխանությունն ու ազդեցությունը Հայաստանում, Զաքարյան-Երկայնաբազուկների տոհմը հետագայում էլ չկորցրեց իր բարձր ազդեցությունը Վրացական արքունիքում:

Նրանց ժառանգները բազմիցս արժանացել են Վրացական թագավորության բարձրագույն տիտղոսների՝ «մսախուրթուցես» (մեծ վեզիր), «ամիրսպասալար», «աթաբեկ» և այլն:

Վրաստանում Զաքարյանների ժառանգները հիշատակվում են միայն Մխարգրձելի-«Երկայնաբազուկ» մականուն ազգանվամբ:

Նրանցից վերջինը ամիրսպասալար է հիշվում Զազան (1345-1380): Այնուհետև մինչև XVIII դարը հիշատակություն չկա Զաքարյանների մասին:

Մոնղոլ-թաթարական (Հուլավյան) տիրապետության ժամանակ Զաքարյանների տոհմը իլխանների արքունիքում կոչվում է «Արղուք», որը հոմանիշն է Մխարգրձելի տոհմանվան և նշանակում է «Երկայնաբազուկ»: XVIII դարի վերջին, երբ Սանահինի կալվածատեր Մխարգրձելիները մտան ռուսական ազնվականության շարքերը, ստացան Արղության-

Երկայնաբազուկ (Аргутский Долгорукий) հետագայում միայն (Долгорукий) ազգանունը:

- Գրկ. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ Ե. 1961:

Ս.Պ. ՊՈՂՈՍՅԱՆ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՊՀ. 1975:

Ա. ՁԱՔԱՐՅԱՆ. (ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ ՏՈՀՄԻ ԾԱԳՈՒՄԸ, ԳԱՂԹԸ ԴԵՊԻ ՁՈՐԱԳԵՏ ԵՎ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ «ՇՈՂԱԿԱԹ»):

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ . ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ. ԳԻՐՔ 1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ 1913:

XII-XIII դարերում Զաքարյանների իշխանությունում հայ մշակույթն ապրում էր նոր վերելք: Բուռն ծաղկում են ապրում մշակույթի կենտրոնները Անիում Հովհաննես Իմաստասերի վարդապետարանը, Գեղարդավանքի, Սանահինի, Հաղպատի, Հաղարծինի ուսումնագիտական կենտրոնները, Գլաձորի համալսարանը, Գոշավանքի, Խորանաշատի, Խոր Վիրապի վարդապետարանները, որոնք բարձրագույն դպրոցներ էին:

Զարգանում է պատմագրությունը. Սամուել Անեցի, Մխիթար Անեցի, Մխիթար Այրիվանցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան:

Հայ իրավագիտական միտքը վերելք ապրեց հանձինս Դավիթ Ալավկաորդու կանոնների և Մխիթար Գոշի դատաստանագրքի, որը հայ միջնադարյան իրավունքի գլուխգործոցն է:

Տաղասացներ Խաչատուր Կեչառեցին, Ֆրիկը, Տերտեր Երևանցին և ուրիշներ ստեղծեցին քնարական գործեր:

XIII-XIV դդ. ավարտվեցին և ստեղծվեցին ճարտարապետական և վանքային համալիրների այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Տաթևի, Սանահինի, Հաղպատի, Կեչառիսի, Հաղարծինի, Հառիճի, Օհանավանքի, Մակարավանքի, Գեղարդավանքի, Գոշավանքի, Գանձասարի, Դադիվանքի, Ախթալայի շինությունները:

Վերելք ապրեց նաև քաղաքաշինությունը: Անին հասավ իր գագաթնակետին, ծաղկում ապրեցին Դվինը, Կարսը, Լոռեն և այլն:

- Գրկ. Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ. ՊՈՈՇՅԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄ. Մ. 2 ՀՐՏ. ԱՆԹԻԼԻԱ 1969:

Ս. ԵՐԵՄՅԱՆ. ՁԱՔԱՐԻԱ Ե. 1944:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ. ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ Ե. 1975

ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ. ՁԱՔԱՐՅԱՆՆԵՐԸ Զ. ԵՎ Դ. ԱՐԱԲԱՏԱՌ ԱՐՁԱՆ.ԳՐ.. ԱՆԲԵՐԴՈՒՄ. «ՊԲՀ» 1971. N 1:

XIV դարի վերջին Զաքարյանների ֆեոդալական տան քայքայումով դադարեց նրանց գերիշխանությունը Հայաստանի ազատագրված տարածքների վրա, բացառությամբ իրենց տոհմական երկրամասերի (Լոռվա զգալի մասը՝ Տաշիր-Ձորագետի):

Զաքարյանների շառավիղները՝ Արղության-Երկայնաբազուկները. այս տարածքում տիրություն էին անում ընդհուպ մինչև XIX դարի վերջերը:

1801թ. Տաշիր-Ձորագետը Վրաստանի հետ միացվեց Ռուսաստանին, կազմելով Թիֆլիսի նահանգի Լոռի-Բորչալուի գավառը:

1920թ.-ից համարվում է Հայաստանի տարածք՝ կազմելով Լոռի-Փամբակի գավառ Թումանյանի շրջանի մեջ:

- Գ. ՇԱԽԿՅԱՆ. ԼՈՌԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԿԵՐՏ ԷՋԵՐԸ. 1986:

Լոռվա Բագրատունիների ճյուղի՝ Կյուրիկյան-Զաքարյան տոհմական տարածքը՝ Լոռին, շինարարական վերելք ապրեց X-XIV դարե-րում: Նոր թափ ստացավ տնտեսական ու առևտրական գործունեությունը:

Երկրամասի պաշտպանությունն ապահովելու համար կառուցվում են Լոռե, Քուլեթ, Պղնձահանք (Ախթալա), Կայծոն, Գագ և այլ բերդեր, որոնք կարևոր եղան Հայաստանի հյուսիսային շրջանների անվտանգության պահպանման գործում:

Զարգացավ ճանապարհների ցանցը, կառուցվեցին կամուրջներ, արտադրա-տնտեսական և օժանդակ շինություններ:

Այս շինություններից հատկապես նշանակալից է Պղնձահանքի (Ախթալա) ամրոցը, որը ժամանակին կարևորագույն դեր խաղաց Հայաստանի պատմա-մշակութային, արտաքին հարաբերությունների ու ներքաղաքական կյանքում:

Պղնձահանքի (Ախթալա) ամրոցը կառուցվել է Բագրատունի Կյուրիկե Ա.-ի օրոք X դարում: Ամրոցը հյուսիսից պարփակված է բրգավոր, բարձրաբերձ պարիսպներով: Գլխավոր մուտքը հարավից է, թաղակապ ընդարձակ սրահ է, արևելյան կողմում եռահարկ աշտարակով:

Ամրոցի ներսում Ախթալայի վանքն է, որի գլխավոր եկեղեցին՝ («Սբ. Աստվածածին») XIII-դարի առաջին քառորդին կառուցել է Իվանե Զաքարյանը:

Իվանեն՝ Զաքարյանների իշխանության գալուց անմիջապես հետո իր ընտանիքի հոգևոր կենտրոն դարձրեց Պղնձահանք - Ախթալան: Քաղաքական նպատակներից ելնելով 1203թ.-ին ընդունել է քաղքեդոնական (ուղղափառական) դավանանք:

Իվանեի օրոք հայ-քաղքեդոնների ազդեցությունը չափազանց բարձրացվեցին:

Հայերը, որոնք դեռևս 451 թվականին՝ Քաղքեդոնի հայտնի ժողովին, ընդունել էին ուղղափառություն, կոչվում էին «քաղքեդոնականներ» և հալածվում էին դարերի ընթացքում, Լուսավորչական եկեղեցու կողմից, որպես հերետիկոսներ:

«Հայ-քաղքեդոնների պրոբլեմները, որպես պատմա-մշակութային առանձնահատուկ նշանակալից երևույթ» առաջին անգամ լրջորեն ուսումնասիրվել է Նիկողայոս Մառի կողմից:

- Գրկ. Ն. ՄԱՌ «АРКАУН». МОНГОЛЬСКОЕ НАЗВАНИЕ ХРИСТИАН, ОБ АРМЯНАХ-ХАЛКЕДОНИДАХ- СПБ. 1905:

Անցումը քաղքեդոնական կամ ուղղափառական հավատքի, (որն այն ժամանակներում կոչում էին Բյուզանդական-Վրացական) Իվանեին չէր խանգարում ակտիվորեն միջամտելու, հովանավորելու Հայ-Լուսավորչական եկեղեցու խնդիրներին:

Իվանե Երկայնաբազուկի բարձր քաղաքական դիրքը և կրթվածությունը աստվածաբանական հարցերում բազմիցս օգնել են ստեղծված քաղաքական և կրոնադավանանքի այն բարդ իրավիճակներում, որում գտնվում էր Հայաստանը XII-XIII դարերում:

Հայ-քաղքեդոնական վանքային կենտրոններ բացվեցին Բյուզանդական կայսրության տարածքում, (Ֆիլիպպոպոլ, Թրակիա, Բալկաններ) որպես կանոն հայ-քաղքեդոնները վանականություն էին անում Վրացական և Հունական վանքերում, Անտիոքում, Աֆոնում և Բուլղարիայում:

1170թ. Բյուզանդական կայսր Մանուիլ Կոմնին, բանագնացներ է ուղարկում կաթողիկոս Ներսես Շնորհալու մոտ, առաջարկով «միավորելու լուսավորչական և ուղղափառական եկեղեցիները»: Այդ ժամանակաշրջանում Հայկական միաբառբառ եկեղեցում շատ հանրահայտ էր եր. եկեղեցիների միացման (ունիատ) գաղափարը: Երկարատև բանակցութ-

յուններն ավարտվեցին 1179թ.-ին «եկեղեցիների միացման» (ունիատի) ձևական ստորագրությամբ:

Արդյունքում XII դարի վերջում տարածաշրջանում ստեղծված բարդ քաղաքական իրադրության պատճառով 1199թ.-ին Կիլիկյան Հայաստանի կաթողիկոս Գրիգոր Ապիրատն ընդունեց և ստորագրեց Լատինական եկեղեցու հետ միաբանվելը, (դրանով ամրապնդելով Կիլիկյան Հայաստանի թագավորությունը), Իվանե Զաքարյանը ինչպես նշել էինք 1203թ.-ին ընդունեց ուղղափառություն (ամրապնդելով Լոռվա թագավորությունը): Իսկ մնացյալ Հայկական իշխանները, եկեղեցու գլխավորությամբ, հետագայում չընդունեցին «Եկեղեցիների միացման» (ունիատի) գաղափարը:

Ինքը՝ Մեծ Հայաստանի իշխանավոր Զաքարե Զաքարյանը կողմ էր «ունիատի» գաղափարներին (գրկ. СИНОДАЛЬНОЕ СЛОВО НЕРСЕСА ЛАМБРОНСОГО, АРХИЕПИСКОПА ТАРСИЙСКОГО. ПЕРЕВОД Н. ЭМИНА М: 1865- с .14- 15)

Սակայն «ունիատի» ստորագրումը հանդիպեց Մեծ Հայաստանի կոնսերվատիվ հոգևորականության կտրուկ հակադրությանը, ինչը պաշտպանվում էր Մեծ Հայաստանի ֆեոդալական շատ տների կողմից (որոնք միշտ էլ միջպետական իշխանության համար հակասություններ էին ստեղծում):

Հայ-Քաղքեդոնության ժամանակահատվածում ստեղծվեցին բազմաթիվ մշակութային արժեքներ, հայ-գրանկարչությունը (մանրանկարչությունը) զարգացավ, ստեղծվեցին մոնումենտալ գեղանկարչության (որմնանկարչության) այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Անիի Տիգրան Հոննեց եկեղեցու, Ախթալայի սբ. Աստվածածին եկեղեցու, Կիրանցի, Քոբայրի, Խուջաբի, Հաղպատի եկեղեցիների որմնանկարները:

Ստեղծագործություններում պահպանվում էր կապը Հայկական կերպարվեստի ավանդական տրադիցիաները, Հայ դավանաբանության կրոնական փիլիսոփայության հիմնական ուղղությունը:

Այսպես օրինակ Անիի Տիգրան Հոնենցի որմնանկարներում կարևորագույն տեղ է հատկացված «Վրացական թագավորների» (Աբխազների և Ալանների) մեծարումը Գրիգոր Լուսավորչին, որպես ամբողջ Կովկասի քրիստոնեության տարածողի: Ախթալայի «սբ. Աստվածածին» եկեղեցու որմնանկարներում պատկերված սրբերի շարքում՝ ամենապատվավոր տեղում պատկերված է Գրիգոր Լուսավորիչը: Եվ այս ամենը այն դեպքում, որ Բյուզանդական ուղղափառության կրոնում Գրիգոր Լուսավորիչը սրբերի դասին չի դասված:

Նշված որմնանկարներից իր կատարողական բարձր արվեստով առանձնանում է Ախթալայի (Պղնձահանքի) սբ. «Աստվածածին» եկեղեցու որմնանկարները, որոնք կատարվել են մոտ 1205-1216 թվականներին:

Իր գեղարվեստական բարձր պրոֆեսիոնալ կատարմամբ, Ախթալայի որմնանկարները, բարձր ուշադրության են արժանացել և ուսումնասիրվել շատ ճանաչված արվեստաբան-պատմաբանների կողմից. (Ժ. դը Մորգան, Պ. Զաքարիա, Ժան Միշել և Նիկոլա Թիերիներ, Յ. Գրենբերգ, Յու. Սապրիկին, Ա. Լիդով և ուրիշներ):

Ախթալայի որմնանկարները ոչնչով չեն զիջում իրենց գեղարվես-

տական բարձր կատարմամբ Կուրբինովոյի որմնանկարներին, որը համարվում է Բյուզանդական որմնանկարչության՝ կենտրոնական, ամենաարտահայտիչ հուշարձանը:

Ախթալայի որմնանկարներում, բացի Հայկական կրոնա-դավանաբանական գաղափարախոսությունից պահպանվել է նաև հայ տրադիցիոն կերպարվեստի՝ մանրանկարչության կանոնները:

- գրկ. ՉԻԿԱԳՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (N 949) 1237թ.-ի ԹԵՄԱՏԻԿ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳԻՐ: Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Լ. ԴՈՒՌՆՈՎՈ. ДРЕВНИЕ ФРЕСКИ АРМЕНИИ 1939г.

«ՄՈՒԳՆԻԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ» ՁԵՌԱԳՐԵՐ

Ախթալայի որմնանկարներն, բարձրարժեք գեղարվեստական ու պատմա - մշակութային նշանակությամբ, իրենց ուրույն տեղն ունեն համաշխարհային արվեստում:

Ախթալայի որմնանկարներն եզակի են նաև նրանով, որ պահպանվել է շուրջ 900քմ որմնանկար (այդ թվագրության և այդ քանակի բարձրարժեք որմնանկար չի պահպանվել և ոչ մի երկրում):

Եվ պատահական չէ, որ 1990թ.-ին Բելգրադում (Հարավսլավիա) ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից կազմակերպված «Հին աշխարհի և միջնադարի արվեստի պատմությանը» նվիրված գիտաժողովում՝ Ախթալայի որմնանկարները դասվել են միջնադարյան արվեստի տասը լավագույն հուշարձանների շարքին:

(զեկուցող՝ Ա. ԼԻԴՈՎ „РОСПИСИ АХТАЛЫ И ИССКУСТВО АРМЯН-ХАЛКЕДОНИТОВ"

հոդվածը խմբագրությամբ՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր ՅՈՒ. ՍԱՊՐԻԿԻՆԻ)



Ախթալայի Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծ

- Որմնանկարների երկրորդ շերտ (XIV-XV դդ)

- - Որմնանկարների առաջին շերտ (XIII դ)



ԱԽԹԱԼԱՅԻ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ (X-XIII դար)

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ԳԻՏԱ-ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Վանքային համալիրի և Ախթալայի միջնաբերդի ամբողջական տեսքը վերականգնելու համար պետք է կատարվեն հետևյալ աշխատանքները:
- Սբ. Աստվածածին եկեղեցու գմբեթի, միջնաբերդի պարիսպ-ների, մուտքի աշտարակի, սեղանատան, պարիսպներին կից շինություն-ների (արհեստանոցներ) և ստորգետնյա անցուղիների շին վերա-կանգնման նախագծեր:

Միջնաբերդի և համալիրի ամբողջ տարածքի հողային աշխատանք-ների հարդագծում:

Ախթալայի տեսքը հյուսիսից



Ախթալայի տեսքը հարավ-արևմուտքից



Ախթալայի ամրոցի պարիսպները

- Ամրոցի միջնաբերդի աշտարակի և պարիսպների ամբողջական շինարարական վերականգնում:
- Սբ. Աստվածածին եկեղեցու հատակի սալապատում (մարմար):

- Վերականգնվող շինությունների պահպանված հատվածների կոնստրուկցիաների ամրացում:
- Սբ. Աստվածածին եկեղեցու թաղերի վերաշար:
- Սբ. Աստվածածին եկեղեցու թմբուկի և գմբեթի անբողջական վերականգնում:



Ախթալայի Սբ. Աստվածածին եկեղեցու և ամրոցի աշտարակի տեսքը արևելքից

ԱԽԹԱԼԱՅԻ
ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ
ՆԱԽՔԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ